ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/133

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Ռնո» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ռնո» ՍՊԸ-ի տնօրեն՝ Վ. Սիմոնյանի, ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7874-2021 գրությամբ «Ռնո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2554-2021 գրության հիման վրա, 18.05.2021թ.-ին «Ռնռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.05.2021թ.-ին:

18.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/133 համարի ծածկագիրը:

26.05.2021թ.-ին և 17.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.06.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2554-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), հայտ է ներկայացրել նաև «ՌՆՌ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ էր բացառել /համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքների տեխնիկական պարամետրերը:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 16-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր < քարտրիջ՝ CB540A > այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է < քարտրիջ՝ CB542A >:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 29.04.2021թ ծանուցել էր «ՌՆՌ» ՍՊԸ-ին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ՌՆՌ» ՍՊԸ-ն ներկայացրել է փաստաթուղթ՝ Հավելված 1,1, որի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը պարզել է որ այդ փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը 05.05.2021թ. մերժել է «ՌՆՌ» ՍՊԸ հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ռնռ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ռնռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 19.05.2021թ.-ի գրությամբ դիմել է «Ռնռ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7874-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը, 25.05.2021թ.-ին ներկայացնելով ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌՆՌ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-LO-2021/133 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 12.05.2021թ.-ին ստորագրված գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր): Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև նաև՝ Մրցույթ) շրջանակներում Մասնակցի հայտը մերժել է, քանի որ հայտի շտկման համար սահմանված ժամկետում Մասնակցի ներկայացրած շտկված հայտը հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք Մասնակցին այդ հիմքերով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու (այսուհետև նաև՝ Ցուցակ) դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Պատվիրատուն 15/04/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնանշման հարցում: Մրցույթի 9-21-րդ չափաբաժինների մասով (այսուհետև նաև՝ Գնման առարկաներ) Մասնակիցը ներկայացրել է հայտ (այսուհետև նաև՝ Հայտ):

1.2. Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 22.04.2021թ.-ի ժամը 11:00-ին: Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի վերաբերյալ՝ 22.04.2021թ.-ի ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրությունը Տեղեկագրում հրապարակված չէ:

1.3. Մրցույթի մասնակցության Մասնակցի հայտում ներառված «գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարության»՝ հավելված 1-ի համաձայն, որպես Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե նշված է՝ rnrfrllc@gmail.com.

1.4. 29.04.2021-ին Մասնակիցը իր էլեկտրոնային փոստին՝ rnrfrllc@gmail.com ստացել է ծանուցում (այսուհետև նաև՝ Ծանուցում), որտեղ նշված էր հետևյալը. «Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5»

ծածկագրով ընթացակարգին «ՌՆՌ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղթերը և պարզել է, որ առկա է հետևյալ անհամապատասխանությունը. մասնավորապես՝

- Ձեր կողմից ներկայացված Հավելված 1.1-ում տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է բացառել /համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքների տեխնիկական պարամետրերը:

- Ձեր կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 16-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է <քարտրիջ՝ CB540A> այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է <քարտրիջ՝ CB542A>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Շտկված տարբերակն անհրաժեշտ է ուղարկել գնահատող հանձնաժողովի քարտուղարի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին»:

1.5. Ծանուցումը ստորագրված չէր: Ծանուցմանը կցված չէր Մասնակցի հայտում «անհամապատասխանություններ» արձանագրելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

1.6. Ծանուցմամբ նշված «անհամապատասխանությունները» շտկելու նպատակով, Մասնակիցը հավելված 1.1.-ում նշված՝ rnrfrllc@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեից շտկված տեխնիկական բնութագրերը (հավելված 1.1.) սահմանված ժամկետում ուղարկել է Ծանուցմամբ նշված՝ t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստի հասցեին: Վրիպման արդյունքում հավելված 1.1. չի ստորագրվել:

1.7. Մասնակցի հայտում «անհամապատասխանություններ» արձանագրելու և մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ՝ 29.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությունը Տեղեկագրում հրապարակվել է 12.05.2021թ.-ին: Ընդվորում, թիվ 3 արձանագրության համաձայն՝ «անհամապատասխանությունները» արձանագրվել են 29.04.2021թ.-ին իսկ Մասնակցի հայտը մերժվել է 05.05.2021թ.-ին:

1.8. 29.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Պատվիրատուն փաստել է, որ շտկված հավելված 1.1-ն ուղարկել է «ՌՆՌ» ՍՊԸ-ն:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Ծանուցման պայմանները կատարելու մասին.

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև նաև՝ Օրենսգիրք).

289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

290-րդ հոդվածի 1-ին մասի և 292-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները կարող են լինել գործարքները կարող են լինել երկկողմ (...) (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ: Միակողմ գործարքների նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են պարտավորությունների և պայմանագրերի մասին ընդհանուր դրույթները:

297-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հասարակ գրավոր ձևով պետք է կնքվեն իրավաբանական անձանց՝ միմյանց միջև գործարքները:

449-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը կնքված է համարվում օֆերտա ուղարկած անձի կողմից դրա ակցեպտն ստանալու պահից:

450-րդ հոդվածի 4-րդ մասին համաձայն՝ պայմանագրի գրավոր ձևը պահպանված է համարվում, եթե պայմանագիր կնքելու գրավոր առաջարկն ընդունված է սույն օրենսգրքի 454 հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

451-րդ հոդվածի համաձայն՝ օֆերտան մեկ կամ մի քանի կոնկրետ անձանց հասցեագրված առաջարկն է, որը որոշակիորեն արտահայտում է առաջարկողի մտադրությունը՝ պայմանագիրը կնքված համարել առաջարկն ընդունած հասցեատիրոջ հետ: Օֆերտան պետք է պարունակի պայմանագրի էական պայմանները:

454-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Ակցեպտն առաջարկն ընդունելու մասին այն անձի պատասխանն է, ում հասցեագրվել է օֆերտան:

Ակցեպտը պետք է լինի լրիվ և անվերապահ:

3. Օֆերտա ստացած անձի կողմից դրա ակցեպտի համար սահմանված ժամկետում դրանում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելը (ապրանքներ բեռնելը, աշխատանքներ կատարելը, ծառայություններ մատուցելը, համապատասխան գումար վճարելը և այլն) համարվում է ակցեպտ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ նշված չէ օֆերտայում:

4. էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով պայմանագիր կնքելիս ակցեպտը համարվում է ստացված այն պահից, երբ օֆերտայում նշված պայմանագրի պայմանները կատարելու ուղղությամբ գործողությունները ձեռնարկելու վերաբերյալ էլեկտրոնային ծանուցումը մուտք է գործում օֆերտա ուղարկած անձի կողմից

նշված տեղեկատվական համակարգ, կամ այն հայտնաբերել է օֆերտա ուղարկած անձը, եթե այն ուղարկվել է նրա կողմից չնշված տեղեկատվական համակարգին:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ գործարքը անձի այն գործողություններն են որոնք ուղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն:

Գործարքը կարող է համարվել կնքված, երբ գործարքը կնքելու վերաբերյալ առաջարկությունն՝ օֆերտան ուղարկած անձը ստանում է առաջարկությունը ստացած անձի պատասխանն՝ առաջարկությունն ընդունելու վերաբերյալ, ընդորում առաջարկությունն ընդունելու վերաբերյալ պատասխանը՝ ակցեպտն անհրաժեշտ է անել օֆերտայով սահմանված ժամանակահատվածում և պայմաններին համաձայն: Հետևաբար, եթե ակցեպտը համապատասխանում է օֆերտայով սահմանված պայմաններին և արված է օֆերտայով սահմանված ժամանակահատվածում, ապա գործարքը համարվում է կնքված:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից. Պատվիրատուն ուղարկել է մասնակցին Ծանուցում: Ծանուցմամբ Մասնակցին արվել է առաջարկ՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հավելված 1.1-ը և շտկվածն ուղարկել t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստին, ընդորում՝ Մասնակցի կողմից հավելված 1.1. ստորագրելու վերաբերյալ պայման Ծանուցմամբ սահմանված չի եղել: Նշյալից կարող ենք փաստել, որ Մասնակցի հայտը բավարար գնահատելու համար անհրաժեշտ էր շտկված տեխնիկական բնութագրերը ուղարկել Ծանուցմամբ նշված t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստին, ընդորում՝ հավելված 1.1-ում ստորագրության առկայությունը կամ բացակայությունը այդ փաստաթղթի գնահատման ժամանակ ազդեցություն չէր կարող ունենալ, քանի որ Ծանուցմամբ հավելված 1.1 ստորագրելու պայման սահմանված չէր:

Ելնելով Ծանուցմամբ սահմանված պահանջից՝ Ծնուցմամբ նշված ժամանակահատվածում և պայմաններին համաձայն, Մասնակիցը շտկված տեխնիկական բնութագրերը (հավելված 1.1.) իր էլեկտրոնային փոստից՝ rnrfrllc@gmail.com, ուղարկել է Ծանուցմամբ նշված Պատվիրատուի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային փոստին, որպիսի պայմաններում Մասնակիցը ամբողջությամբ և անվերապահորեն կատարել է Ծանուցմամբ պահանջվածը: Սակայն հաշվի չառնելով այդ հանգամանքը, Պատվիրատուն Մասնակցի ներկայացրած տեխնիկական բնութագիրը (հավելված 1.1.) գնահատել է անբավարար և հայտը ամբողջությամբ մերժել է հավելված 1.1-ը ստորագրված չլինելու պատճառաբանությամբ: Հարկ է նշել, որ 29.04.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Պատվիրատուն փաստել է, որ շտկված հավելված 1.1-ն ուղարկել է «ՌՆՌ» ՍՊԸ-ն, այսինքն՝ այդ փաստաթղթի իսկության վերաբերյալ Պատվիրատուի մոտ կասկածներ չկան: Բացի

այդ, եթե ստորագրությունը այդքան կարևոր հանգամանք է, ապա ինչու Ծանուցումը Պատվիրատուի կողմից ստորագրված չէր: Ուստի նշյալից էլ կարող ենք փաստել, որ հավելված 1.1-ը ներկայացվել է նույն ձևով, ինչ ներկայացվել է Ծանուցումը:

Անհրաժեշտ է նշել, որ Մասնակցի հայտում «անհամապատասխանություններ» արձանագրելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի արձանագրությունը կցված չեր Ծանուցմանը, այսինքն՝ Ծանուցումը ստանալու պահին «անհամապատասխանության» վերաբերյալ Պատվիրատուի կողմից ստորագրված որևէ փաստաթուղթ Մասնակցին հասու չի եղել:

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք եզրահանգել, որ Մասնակիցը հավելված 1.1. շտկելու նպատակով ձեռնարկել է Ծանուցմամբ իրենից պահանջված բոլոր գործողությունները: Այդ կերպ արտահայտելով իր կամքը Մրցույթին մասնակցությունը շարունակելու վերաբերյալ: Իսկ կամահայտնությունը գործարքի կնքման համար ունի առաջնային նշանակություն (ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1013/02/13 որոշում):

Եզրափակելով վերոնշվածը, կարծում ենք, որ հավելված 1.1 շտկելուն ուղղված Մասնակցի գործողությունները բավական էին, որպեսզի վերջինիս հայտը չմերժվեր և գնահատվեր բավարար:

2.1. Ծանուցումը և արձանագրությունները կազմելու ու ուղարկելու մասին.

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք).

33-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 4-րդ կետի, 3-րդ մասի 5-րդ կետի և 8-րդ մասի համաձայն՝

«1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: (...):

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, (...): Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: (...)

սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ).

41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համահամաձայն՝ Գնահատող հանձնաժողովի՝ գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ հայտերի բացման նիստի օրը և ժամին հրավիրվում է հայտերի բացման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովի նիստերը պարտադիր կերպով ենթակա են արձանագրման, այսինքն՝ յուրաքանչյուր նիստի, այդ թվում՝ հայտերի բացման, վերաբերյալ անհրաժեշտ է կազմել արձանագրություն, որը ստորագրում են գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը: Հայտերի բացման նիստում, ի թիվս Օրենքով սահմանված այլ գործողությունների, գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների ներկայացրած հայտերի համապատասխանությունը տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Եթե գնահատման արդյունքում Մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հայտերի բացման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նշյալից հետևում է, որ հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների հայտերը և, եթե հայտերում արձանագրվում են հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանություններ, ապա գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և հանձնաժողովի քարտուղարը հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ուստի, եթե հայտերի բացման նիստի օրը մասնակիցը չի ծանուցվում իր հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանության վերաբերյալ, ապա վերջինիս մոտ առաջանում է օրինական ակնկալիք առ այն, որ իր ներկայացրած հայտը համապատասխանում է տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Որպիսի պայմաններում, ելնելով որոշակիության սկզբունքից՝ հայտերի բացման նիստից հետո մասնակցի հայտում հրավերի նկատմամբ անհամապատասխանություններ պետք է չարձանագրվեն:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-1142, ՍԴՈ-1148, ...) արտահայտված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրինական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքները իրավական պետությունում՝ որպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ենթակա են պաշտպանության, այդ մոտեցումը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 22.04.2021թ.-ի ժամը 11:00-ին: Հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցում հայտերի բացման նիստի օրը՝ 22.04.2021թ.-ին Մասնակիցը չի ստացել, այլ ստացել է 29.04.2021թ-ին, այսինքն՝ հայտերի բացման նիստից 7 օր անց: Որպիսի պայմաններում 22.04.2021թ.-ից հետո Մասնակցի մոտ առաջացել է օրինական ակնկալիք, որ իր հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին: Ուստի, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-1142, ՍԴՈ-1148, ...) արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ այդ ակնկալիքները Հայաստանի Հանրապետությունում ենթակա են պաշտպանության, որը պետք է դրսևորվի Ընթացակարգը մերժելով, քանի որ Մասնակցի հայտում արձանագրված «անհամապատասխանության» վերաբերյալ ծանուցումը Մասնակցին է ուղարկվել՝ Կարգի 41-րդ կետի և իրավական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքների

խախտմամբ: Ինչի արդյունքում Մասնակիցը հայտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առաջ: Ուստի, ելնելով իրավական պետությունում օրինական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքների պաշտպանության անհրաժեշտությունից կարծում ենք, որ սույն Ընթացակարգը անհրաժեշտ է մերժել:

2.2. Հավելված 1.1-ում նշված համարժեք արտահայտության վերաբերյալ.

Ինչպես երևում է սույն դիրքորոշման փաստական հանգամանքներից, Ծանուցմամբ պահանջվել է Մասնակցից Հավելված 1.1-ում բացառել /համարժեք/ արտահայ-տությունները: Այդ պահանջը մեր կարծիքով անհիմն է և Հավելված 1.1-ում «համարժեք» արտահայտությունը նշված լինելու հանգամանքը չի կարող դիտվել որպես հրավերի նկատմամբ անհամապատասխանություն: Քանի որ Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրում սահմանված էր, որ Մասնակիցը կարող է առաջարկել հրավերով սահմանված ապրանքներին համարժեք ապրանքներ: Այդ ահնգամանքից ելնելով է, որ Մասնակիցը առաջարկել է հրավերով սահմանված ապրանքներին համարժեք ապրանքներ և Հավելված 1.1.-ում դա ուղղակիորեն նշել է: Նշյալից կարող ենք փաստել, որ 9-15 և 17-21 չափաբաժինների մասով Մասնակցի հայտը ի սկզբանե համապատասխանում էր հրավերի պահանջներին և ենթակա չէր մերժման: Մինչդեռ, Պատվիրատուն ոչ իրավաչափորեն այդ չափաբաժինների մասով պահանջել է շտկում և հետագայում՝ սխալ կիրառելով Կարգի 42-րդ կետը շտկված Հայտը մերժել է, որը հանգեցրել է սույն Ընթացակարգի նախաձեռնմանը:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌՆՌ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2021/133 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/133 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 15.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ռնռ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 29.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Ռնռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում՝ տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է բացառել /համարժեք/ արտահայտությունը՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը, ինչպես նաև 16-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրում նշված է «քարտրիջ՝ CB540A», այնինչ գնման ընթացակարգի հրավերով պահանջվում է «քարտրիջ՝ CB542A»:

v. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և 29.04.2021թ.-ին ծանուցել «Ռնռ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Ռնռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, 05.05.2021թ.-ին մերժել է վերջինիս հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7874-2021 գրությամբ «Ռնո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի.

- 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

- 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված

նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով,

- 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 15.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 2.3-րդ կետի համաձայն՝ «Ռնռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում՝ տեխնիկական

բնութագրերում անհրաժեշտ է բացառել /համարժեք/ արտահայտությունը՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը, ինչպես նաև 16-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրում նշված է «քարտրիջ՝ CB540A», այնինչ գնման ընթացակարգի հրավերով պահանջվում է «քարտրիջ՝ CB542A», ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և 29.04.2021թ.-ին ծանուցել «Ռնո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Ռնո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի Հանձնաժողովը 05.05.2021թ.-ին որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 32-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանվել է, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, իսկ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի այս պարագայում «Ռնո» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված Հավելված 1.1-ը պետք է հաստատված լիներ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն

դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ռնո» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստը նշանակված էր 22.04.2021թ.-ին ժամը 11:00-ին, սակայն «Ռնո» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունների մասին համապատասխան շտկման մասին ծանուցումն ուղարկվել է ոչ թե Կարգի 41-րդ

կետով սահմանված ժամկետում, այլ 29.04.2021թ.-ին, Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից 29.04.2021թ.-ի հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է «Ռնռ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում առկա անհամապատասխանությունների մասին, ինչի արդյունքում Հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել 29.04.2021թ.-ին՝ պահպանելով Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով և Կարգի 41-րդ սահմանված պահանջները, այն է՝ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում՝ (տաս /10/ աշխատանքային օր) իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրելու պարագայում Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը, իսկ Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը՝ 29.04.2021թ.-ին, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել է «Ռնռ» ՍՊԸ-ին:

Վերոնշյալ իրավական և փաստական տվյալների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացված գործողություններն իրավաչափ են:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռնռ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, թերի շտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7874-2021 գրությամբ «Ռնռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/133 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ռնռ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**